

Սգակիր եղբայրներ եւ քոյրեր,

Քիչ առաջ հոդին յանձնեցինք մեր սիրելի Տօքք. Կարո Կարապետեանին։ Այստեղ հաւաքուած ենք յանուն Ս. Արոռոյ Միարանութեան, պաշտօնէութեան եւ ձեր բոլորին կողմէ յայտնելու մեր ցաւակցութիւնները Ամենապատիւ Պատրիարք Հօր, հանգուցեալին զաւակին՝ Տօքք. Վիգէնին եւ Տիկ. Շնորհիկին, սիրասուն զաւակաց, քոյրերուն եւ բոլոր ընտանիքի անդամներուն։

Տօքք. Կարապետեանը մեր գաղութիւ զաւակն էր։ Փոքք հասակէն իրար նանցած էինք որպէս մեծ եղբայր, սրտակից բարեկամը ու ընկերը։ Իր մահը մեծ կորուստ է մեր բոլորին, անոր համար որ ինք հանրածանօթ էր թէ այստեղ եւ թէ արտասահման իր բժշկական մասնագիտութեամբ, եւ որպէս բանաստեղծ, գրագէտ, նաև դասախոս մեր ժառանգաւորաց վարժարանի եւ ընծայարանի։

Հանգուցեալը զաւակն էր Յարութիւնի ու Ռաֆելի, Զէյթունի հերոսամարտի յիշատակներով մեծցած, Սրբոց Թարգմանչաց Վարժարանէն սկսելու մինչեւ բարձրագոյն համալսարանները։

Լաւ յիշատակներ բոցուց։ Պէտք է շեշտել իր եկեղեցասիրութիւնը։ Հակառակ արտասահմանի մէջ ունեցած իր աշխատանքին, կ'ընտրէր իր տարեկան արձակութիւնը Երուսաղէմ անցնել։ Ու մասնակից կ'ըլլար Վերափոխման ու Խաչի տօներու գիշերային հսկման արարողութեանց, աղօրելու եւ լսելու իր Հսկումի միսրիկ շարականները։ Մինչեւ իր կեանքի վերջին օրերը կը սիրէր իր ծննդավայրը, ու կը փափաքէր իր վերջին օրերը Երուսաղէմ անցնել' որ իր մարմինը հանգչէր սիրելի ծնողաց մօտ։ Փափաքը ու կտակը իրագործուեցան։ Եւ ահաւասիկ այսօր մարմինը կի հանգչէ իրեն շատ սիրած Սիոնի բարձութին վրայ։ Աւանդութիւններով լցուն հայորդի մըն էր միշտ հետաքրիր մեր ազգային ու եկեղեցական ցաւերով։

Կը յիշեմ հին օրերը իր եկեղեցասիրութեան։ Արձակուրդներուն երբ ժառանգաւորները պայուսի կ'երթային, իրեն սրտակից ու հայրենակից հանգուցեալ Վահրամ Մատևանի ու Սահակ Գրայանեանի հետ կուգային Ս. Յակոբ, ու վերարկու հագած կը մասնակցէին երեկոյեան ժամերգութեանց։ Ի՞նչ գոհունակութիւն է բոլորին համար երբ կը յիշենք այսօր անցնեալի մեր բարի զաւակները։

Այս բոլորով մէկտեղ, հանգուցեալը ունեցաւ եկեղեցակը ու ազգասէր զաւակ մը շարունակելու իր հօրը ուղին։ Մենք այսօր ուրախ ենք ու հպարտ որ Տօքք. Վիգէնի բժշկական համրամ ու գործունեութիւնն նոյնըէս հանրածանօթ է՝ պատիւ բերելով մեր հայութեան։

Իր շնորհալի ու անուշիկ ընտանիքը բերած է Երուսաղէմ ու այստեղ մկրտած։ Ապագայ խոստացող զաւակներ են բոլորը, լաւ Հայեցի դաստիարակութեամբ։ Կը մաղթենք որ մեր գաղութէն ներս նոր ծիլեր ծիլն նման հանգուցեալին են իր զաւակին։

Կարապետ Յակոբեան
Աւագ Քարտուղար Ս. Արոռոյ

Երուսաղէմ

29 օգոստոս 2001